

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ≡
≡ ≡ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

1928

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ
ԲԱՐԻՁ



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ≡≡
≡≡ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ



1928

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

ԲԱՐԻՁ



Կ Ո Ն Դ Ա Կ

ԵՐԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

(7 ՅՈՒԼԻՍ 1906)

« Մկրտիչ ծառայ Յիսուսի...

« Նման այլոց և Դուք, Տեարք պատուականք, իղձ ըզձայեալ էք ձերախանն գալ ի հանդէս նուիրաբերութեան կարօտելոց ի վերայ հաստատուն հիմանց կանոնադրութեան « Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն » վերաառութեամբ, զոր ուշի ուշով ընթերցեալ Մեր և հասու լեալ նպատակաց մէն ծի յօղուածոց այնորիկ, բերկրեցայ յոյժ:

« Բարեգործական Միութեամբ այրորիկ ի հեռաւոր աշխարհէն նզիրաացւոց փութայք կատարել զբարոյական պարտիս ձեր առ կարօտեալ եղբարսդ որք աստ ի Կովկաս, վասն որոյ յղելով ընդ Կոնդակիս զՀայրապետականն Մեր զօրհնութիւն վասն յարատեւութեան և բարդաւածման հաստատութեանդ և արդիւնաւորութեան վաստակոց ձեռաց ձերոց, եղբրուք զօրացեալք ի շնորհս Ս. Հոգւոյն և օրհնեալք ի մէնջ. Ամէն: »

Կ Ո Ն Դ Ա Կ


ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՄԱՏԹԷՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ

(27 ՆՈՅԵՄԲԵՐ 1909)

« Մատթէոս ծառայ Յիսուսի...

« Արդ՝ ի ձեռն օրհնաձիր կոնդակիս յայտնելով Վսեմափայլ Ատենապետիդ և հաճայն Գերազնիւ անդամոց Բարեգործական Միութեանդ զլիաշուրթն գոհունակութիւն Մեր հանդերձ Հայրապետական օրհնութեամբ յաղագս շնորհաւորութեան և սրտաբուլիս ծաղթանացն, գովեմք զսրտեռանդն գործունէութիւն Միութեանդ եւ ծաղթեմք առ Տէրն պարգեւել ամենեցունդ և որոց գործակից և սատար հանդիսացեալ են հաստատութեանդ առողջութիւն ծարմնոյ, բարեբաստութիւն կենցաղոյ եւ կորով ծոցայ առ ի յառաջվարել անյողղողդ և անշեղ զծանրատար գործդ, պսակել և բեղմնաւորել զանդու ջանս և զվաստակս բարեգործ հարազատիցդ, պահելով հաստատուն և անսասան զբարեգործական հաստատութիւնդ յօգուտ ազգիս, ի պարծանս Միութեանդ և ի ճիսթարութիւն վաստակաւորացդ և Մեր:

« Ողջ լերուք, զօրացեալ եւ պահպանեալ ի խնամս Երկնաւոր Հօր եւ օրհնեալ յաւէտ ի Մէնջ. Ամէն: »



« Գէորգ ծառայ Յիսուսի...

« Ընկալեալ կանոնաւորապէս ի բարեջան Վարչութենէդ զամենայն տեղեկագիրս գործունէութեան Ձերոյ, հաճութեամբ և մխիթարութեամբ տեսանեմք, զի Բարեգործական Ընդհանուր Միութիւնդ բոլորեալ է զութեւորդ ամ ազգօգուտ գործունէութեան իւրոյ: Եւ յընթացս ութն ամաց բարեպէս սփռեալ և ծաւալեալ է ընդ ամենայն կողմանս զգործունէութիւն իւր, հիմնելով ի բազում հայաբնակ քաղաքս Եգիպտոսի, Տաճկաստանի, Եւրոպիոյ և Ամերիկայի առաւել քան զհարիւր Մասնաձիւղս, որք միաւորեալ վեհ նպատակաւ և օգտաւետ աշխատանօք իւրեանց, ի կատար ածեն զմարդասէր և զքրիստոնէական գաղափարս յօգուտ և յերջանկութիւն Ազգիս Հայոց եւ ապացոյցանեն գործնականապէս զի միութիւն է զօրութիւն եւ ճայր ամենայն բարեաց:

« Ահաւասիկ, զսոյն օրինակ ողի եւ զայսպիսի եռանդաղին գործունէութիւն տեսանելով ի Ձեզ, ուրախանամք եւ մխիթարիմք յոյժ, մանաւանդ զի այսօր շնորհիւ ձեռներէցութեան եւ անձնուէր աշխատանաց Բարեգործական Ընդհանուր Միութեանդ, բաղձանան կրթական եւ բարեգործական հաստատութիւնք, որք ծաւալեն զճառագայթս լուսոյ եւ զիտութեան ի խաւար անկիւնս հայաբնակ գաւառաց Տաճկաստանի:»


— 0000 —

« Սահակ ծառայ Յիսուսի...

« Երբ արդէն « Միութիւնդ » իր վսեմ նպատակին օրհնութեամբ ուռճացած եւ Աւետարանի առակաւոր ծառին չափ ձիւղաւորուած է, որուն ոստերուն վրայ եւ հովանիին տակ կը պատսպարուին հացի եւ գրի կարօտ երամներ, մենք շատ ուշ մնացած ենք մեր սիրալեղ հիացումին միացնել սրտագին մաղթանքներ անոր զարգացման ու բարգաւաճման համար:

« Այս ակամայ յապաղումը Միութեանդ փրկարար պաշտօնի մասին հաւատքի պակասութեան եւ համակրանքի ժլատութեան յայտարար նշանակը չէր, ո՛չ, երիցս ոչ, քանի որ անբախտ Կիլիկեցին ամէնէն աւելի բաղդաւորեցաւ Միութեանդ առատաձեռնած նպաստներէն, եւ քանի որ Ժողովուրդին ծով ցաւերուն վրայ սիրտս տոչորող եւ Էութիւնս սպառող կրակին, սուգին ու կոծին զովարար ցօղը եւ սփոփանքի յոյսը եկան ամէնէն առաջ Եզրիպտոսէն:

« Միութիւնդ սոսկ զգացումի ծնունդ չէ, այլ ծաքի, սրտի եւ կամքի ներդաշնակ զուգորդութեան արգասիքն է:... Օրհնեալ և դարձեալ օրհնեալ անուն և նպատակ Միութեանդ: »



Կ Ո Ն Դ Ա Կ

ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆԻ

Պատրիարք Կ. Պոլսոյ

(28 ԴԵԿՏ. 1909)

« Եղիշէ ծառայ Յիսուսի...

« Այսպիսի ճարձնոյ ճը գոյութիւնը այնքան աւելի անհրաժեշտ ու ստիպողական դարձած էր, որքան ճեր Ասիարեանի կարօտ ժողովրդեան բարձրագոյ պէտքերն անհրաժեշտ կ'ընծայեն անոր օգնութեան հասնելու հարկը: Եւ ոչ նուազ քաջալերիչ պարագայ ճըն է, որ Միութիւնն հիմնուելով ձեռնհաս և հեռատես անձերու նախաձեռնութեամբ և այնչափ արդիւնաշատ նպատակի ճը համար՝ կրցած է զրուիլ այնպիսի ուղղութեան ճը մէջ, որ պիտի ծառայէր անոր գոյութիւնն յարատեւ ու անվտանգ պահելու, որպէս զի կարենար զիմել ճիշտ զէպի բարեգործական վսեմ նպատակն: Այսպիսի հիմնարկութիւն ճը բնականաբար համակրութեամբ պիտի ուղջունուէր նաեւ Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէ, և հետեւաբար Խառն Ժողովը գոհութեամբ գնահատեց անոր հանրային օգտակարութիւնը և իր ծրագրին խոհական ողին: ...

«Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ամենուղ հետ
ըլլայ. Ամէն:»

— 0000 —

Կ Ո Ն Դ Ա Կ

ԳԵՐԵՐՋԱՆԻԿ Կ.-Պատրիարք

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԷՐՋԵԱՆԻ

(26 ՅՈՒԼԻՍ 1911)

« ...Ուրախ եմք, Վսեմափայլ և Ազնուաշուք Տեարք,
և յոյժ կը ծխիթարուինք նկատելով « Հայկական Բա-
րեգործական Ընդհ. Միութեան » ձեջ ձի նոր ցոլացում
ձեր սուրբ կրօնի վարդապետութեան, որոյ վրայ հիմնեալ
տեսնել կը բաղձանք, և է անշուշտ, բարերար Ընկե-
րութիւնդ, որ նպատակ ընտրած է իրեն ձեր ժողո-
վրդեան նիւթական և տնտեսական վիճակը բարու-
քելու, ծտաւոր և բարոյական ճշմարիտ և քրիստոնէա-
կան զարգացման նպատուելու :

« Գովելի է, Վսեմափայլ և Ազնուաշուք Տեարք,
այս վախճանի զիմող Ձեր ձեռնարկն, ընտիր է անոր
նպատակն և գնահատելի Ձեր ջանքերն. արդիւնալից
պիտի ըլլան առաջի Աստուծոյ ձեր կարօտ և վշտակիր
ժողովրդեան Ձեր ճատուցած բարիքն :

« Եւ ձեռք կը ձաղթենք Ձեզ ի Տեառնէ ամէն
բարիք, յաջողութիւն և երջանիկ օրեր : »



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԵՐՐ

ՄԻԱՀԱՄՈՒՌ ԿԸ ԳՆԱՀԱՏԵՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ

«Մենք վաղուց մեր գաղափարը կազմած էինք
Հայկ. Ընդհ. Բարեգործականի մեծ ու վսեմ նպատակի
մասին, քանի որ կիլիկիոյ հացակարօտ ազգայինը շատ
անգամ մեր միջնորդումով եւ միջոցաւ վայելած էին մար-
դասիրական բարիքներ, եւ զոր Միութեան նպաստներով
իրրեւ երկնային ստացածիր օրհնութիւն անխնայ սիրած
էինք:»

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՅ

«Հ. Բ. Ը. Միութիւնը եւս, մեր ազգային աննա-
խընթաց եղեռնին, ջարաջար հալածուեցաւ: Քանի՜ քանի
նահատակներ՝ Բարեգործականի լաւագոյն անդամներէն՝
այժմ կը հանգչին գերեզմանի խաղաղութեան մէջ...:»

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՅ

«Համոզուած եմ սակայն, որ եթէ մեր Ազգին մէջ
միակ ձեռնարկ մը կայ, որ խոհեմութեամբ մտածուած,
իմաստութեամբ կազմակերպուած, եւ ուղղամտութեամբ
գործադրուած ըլլայ, այն ալ Հ. Բ. Ը. Միութիւնն է:»

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ

« Նոր տպաւորութիւն մը թողուց մեր վրայ « Արարատեան » որբանոցը՝ մեր այս անգամու այցելութեան առթիւ : Որբանոց մը չէր որ կը մտնէինք, այլ՝ եմէ կարելի է ըսել Զուարթնոց մը, արթուն եւ զուարթ փոքրիկներու օթեւան մը, ուր մէկեւ մէկ կողմէ՝ մեր ազգային աղէտքի կենդանի վկաները տեսնելով կը ձմուռէր մեր սիրտը, միւս կողմէ սակայն՝ անոնց ցնծութեան եւ ծափերու արտայայտութիւններէն ներհակապէս զգածուած՝ իբրեւ երջանիկ էակներ կ'ողջունէինք ու կ'օրհնէինք մեր այնքա՛ն տարաբախտ ու սիրուն զաւակները :

...Անձնուէր ու համերաշխ գործակցութիւնն էր անշուշտ որ յաջողած էր այնքա՛ն տաքուկ ու զուարթարար մթնոլորտ մը ստեղծել, ինչպէս « Վասպուրական » Որբանոցի, նոյնպէս եւ « Արարատեան » ի ծոցին մէջ, Բարեգործականի փրկարար հովանաւորութեան ներքեւ :

Օրհնեա՛լ ըլլան ամէն անոնք որ մեր արիւնլուայ պատարագին թանկագին նշխարները կը պահպանեն ձաւատագրական կորուստէ մը, մոռցնելով անոնց՝ իրենց վէրքերու կսկիծն ու տառապանքի դառնութիւնը, ու պատրաստելով զիրենք վաղուան վերածնութեան մեծ զոհագործումին : »

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐԵԱՆ

Պատրիարք Երուսաղէմի

« Միութեան գեղեցիկ նպատակը, որ այնքան սիրալիր ողջունուեցաւ ամէն կողմէ, կարելի չէր որ նոյնչափ սրտագին չընդգրկուէր Տիգրանակերտի հայութեան կողմէ եւս : Այդ ճշմարտութիւնը հասկցող ժողովուրդը անշուշտ պիտի փութայ Միութեան կողին պատասխանելով սրտեռանդն բերել իր լուսման՝ անոր գանձանակը, իր այլեւս մշտական դարձած ցաւերը դարմանելու եւ աւերակները նորոգելու համար : »

ԶԱԻՆ ՎԱՐԴ. ՏԵՐ-ԵՂԻԱՅԵԱՆ

«...կը վկայեմ անաջառ խոստովանութեամբ որ ե-
գիպտոսի հայութեան Հ. Բ. Ը. Միութիւնն սքանչելի ընտ-
րութիւն մը ըրած է, Հայոց գաղթավայրին «Միսուն»
երկսեռ վարժարաններով շուրջ 2300 ուսանողներու, որոնց
ունման ու կրթութեան հոգն ստանձնած են 60-70 բարե-
բարոյ երկսեռ ուսուցիչներ եւ քահանաներ, որք միմեանց
հետ ներդաշնակ կը ջանան ազգին մնացորդին երկսեռ
մանկտին այնպէս մը դաստիարակել տոհմային եւ հոգե-
կան կրթութեամբ, որ լինին Ֆշմարիտ հայեր ու իսկապէս
քրիստոնեաներ : »

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՐՔԵՊ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

« Միութեան բարի նպատակն ու բարձր իտէալն
ազգային գոյութեան եւ վերածննդեան միակ յոյսն ու ա-
պաւէնը կը նկատեմ : Տառապեալ հայուն մտաւորականին
հետ մարդասիրական զգացումն զուգորդել առատածեռ-
նութեանց վսեմագոյնն է : »

ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿ. ԱՇՈՏ

« Խանդավառութիւնք լաւագոյն ծառայութեան մը
գիտակցութեամբ, գօտեպնդութիւնք լուրջ պարտականութեան
մը պատասխանատուութեամբ, եւ աշխատինք այս ոգւով
յաջողցնել Հ. Բ. Ը. Միութեան հայրենասիրական ծրա-
գիւրներուն գործադրութիւնը ազատ Հայաստանի վերա-
շինութեան գործին մէջ : »

ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿ. ԿԻԼԷՍԵՐԵԱՆ

« Հայկ. Բարեգործականը ամենուրեք իւր անուան
համապատասխան գործերովը կը փայլի, որուն մի նմոյշն
ալ ի Մերսին այցելելու եւ տեսնելու բաղդն ունեցայ : Հի-
ւանդանոցի մաքրութիւնը, լոռութիւնը եւ կարգապահու-
թիւնը ամէն գովեստի արժանի է : »

ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿ. ՍԱՐԱՃԵԱՆ

« Եթէ Բարեգործականը պատերազմէն առաջուան իր ութամեայ գոյութեան միջոցին ոչինչ ըրած չըլլար յօգուտ Ազգին, միայն պատերազմէն վերջ Եգիպտոսի մէջ իր կազմակերպած «Սիսուան» վարժարաններովը, Որբանոցովը, Այրիանոցովը, Արհեստանոցովը եւ Հանդերձատունովը արժանի պիտի ըլլար արդէն Ազգին երախտագիտութեանը : »

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

« Կը հաւատամ եւ ազգին որբերուն յառաջդիմութեան եւ ապագային համար նուիրումներուն կեանքին եւ հոգւոյն համար՝ ճշմարիտ օրհնութիւն մը պիտի հանդիսանայ անոնց ապագայ երջանկութիւնը որ իրենց ջանքերէն պիտի պտղարբերի : »

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

« Մեր ազգային կարօտութեանց կատարեալ ըմբռնումովը, գործնական հիմնադրով, ողջամիտ ուղղութեամբ եւ անյողդողդ յարատեւութեամբ կը դիմէ Հ. Բ. Ը. Միութիւնը դէպի առաջադրած նպատակն, եւ իր էութիւնն, որուն պէտքն այնքան զգալի եղած էր, կը սկսի փայլիլ գործունէութեամբ եւ արդիւնքներով, եւ արժանի հանդիսանալ հանրային համակրանքի եւ ձեռնտութեան : »

ՎԱՀՐԱՄ ԵՊԻՍԿ. ՄԱՆԿՈՒՆԻ

Հ. Բ. Ը. Միութիւնը մեր հայ ազգի բարգաւաճման պաշտպան ու զօրավիգ ըլլալու մեծ դեր մը պիտի ունենայ ներկային եւ ապագային մէջ : Այս պատճառաւ անկեղծ սրտով մեր երախտագիտական զգացումներն կը յայտնենք յարգելի հիմնադիրներուն : »

ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿ. ՊԱԼԵԱՆ

« Դերագանցապէս ազգասիրական այդ լուրջ եւ փրկարար գործն կոչուած ըլլալով մեր տառապեալ ազգին ազագագայ միխթարութիւններ պարգեւելու, կը հաւատամք ներկայիս թէ Բարձր-Հայոց ժողովուրդն ալ յօժարափոյթ կ'ըղծայ իր լուսման նետել ազգ-կրթական կարօտութեանց եւ բացառիկ Ֆէնաժամներուն օգնութեան հասնելու սանձաւորած Միութեան գանձանակին մէջ : »

ՍՄԲԱՏ ՎԱՐԴ. ՍԱՍՏԵԹԵԱՆ

« Հայր միշտ երախտագէտ պէտք է լինի, չէ թէ լոկ խօսքով ու գրչով, այլ գործնականապէս իր պարտքը լինելու է բոլորանուէր փարելու այդ մեծ Միութեան, որ իրն է ու իրեն պիտի հասնի, որ արցունքը պիտի սրբէ եւ դարմանումը պիտի կրնայ համարուիլ աջէն ու ձախէն հոսող ու յորդող Թշուառութիւններուն : »

ԳԵՈՐԳ ՎԱՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ

« Հ. Բ. Բ. Միութիւնը ամա այդպէսով իր անունին եւ բարերար գոյութեան շուրջ ստեղծեց ջերմագին համակրանքի մաքուր մեծնորստ մը, իր տեսականին ու գործնականին մէջ արժանի եղաւ փնացուցուած կիլիկիոյ դեռ ապրող զաւակներուն ա՛յնքան անկեղծ եւ անմոռաց շնորհապարտութեան մասնաւորապէս, եւ բովանդակ հայութեան սիրոյն, յարգանաց եւ դրական գործակցութեան ընդհանրապէս : »

ՇԱՀԷ Ծ. Վ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

« Կիլիկեան տառապանքի արիւնտ շրջաններուն, եւ մանաւանդ իմ Վիճակիս բազմաֆայ ու բազմակարօտ Հաճնոյ դժբաղդ ժողովուրդին, Հ. Բ. Բ. Միութիւնը եղաւ առաջինը նպաստ ու հացագին հասցնող : »

ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՍԵՐՆԵՐԸ

ԱՆԽՏԻՐ ԿԸ ԳՆԱՀԱՏԵՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻԱՆԸ

« Հայկական Ընդհանուր Միութիւնը, իբրեւ համազգային Բարեգործական Ընկերութիւն, փոքրիկ հանրապետութիւն մըն է : »

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

« Պէտք չունիմ Հայութեան վրայ ծանրացող պարտականութիւնը յիշեցնելու, գիտեմ որ կը բաւէ ամէն Հայու ազգասիրութեան կոչում ընել, որպէս զի իւրաքանչիւրը տայ ինչ որ կրնայ, եւ, կը սիրեմ յուսալ, աւելի քան ինչ որ կրնայ, այն վեհ մտածումով որ Թերեւս ասիկա պիտի ըլլայ վերջին ու փրկաւէտ զոհողութիւնը : »

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

« Հ. Բ. Ը. Միութիւնը ապակի է տուն մըն է : »

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

« Հ. Բ. Ը. Միութիւնը, իր բոլոր շարքերովը, զինակիրներ հայ բարեգործական բանակին, ահա՛ եղբայրական օգնութեան եւ հայրենիքի վերաշինութեան նուիրական գործին կը լծուի, անվերապահ եւ անձնազոհ նուիրումով, քան զի պարտականութեան եւ զոհողութեան վճռական ժամը արդէն հնչած է ամէն սրտցաւ հայու համար, բայց մանաւանդ մեր սիրելի Միութեան ամէն մէկ ուխտադիր անդամին համար : »

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ

« 60) ական Թուականներէն ի վեր ազգին մէջ հետըզհետէ երեւցած այլեւայլ կարգի կազմակերպութեանց մէջ, եւ, իմ մասիս, այս նորակազմ ընկերութիւնը կր տեսնեմ ամէն յոյս եւ ապահովութիւն ներշնչող, Թէ՛ իրեն ծնունդ տուող անձանց անկախ դիրքին առաւելութեամբը, Թէ՛ նպատակին բարձրութեամբը եւ հանրայնութեամբը, եւ Թէ՛ օրինակ առնուած տիպարին (Իսրայէլեան Միութիւն) գործնականութեամբը եւ վսեմութեամբը : ...Խորաբմատ, բազմաստեղն, կենսունակ ծառն է որ կը սաւառնի դէպի բարձունս, ե՛ւ կը վայելչանայ, ե՛ւ կը պտղաբերի, ե՛ւ կը հովանաւորէ : »

ՏՕԲԹ. 3. ԹԻՐԵԱՔԵԱՆ

« Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եզական է իր տեսակին մէջ : Անոր ոյժ տալու ամէնքս ալ պարտաւոր ենք : Ազգին համար բարոյական, մտաւոր եւ տնտեսական լինարան մը գոյացնելու հեռատես խորհրդովն յղացուած է անիկա. իր աշխարհագրական դիրքն ալ իրեն համար անկախութիւն կ'ապահովէ նիւթապէս, ինչպէս որ ազգային կուսակցութիւններէ վեր բռնած իր դիրքն ալ իր բարոյական անկախութիւնն երաշխաւորած է, եւ ասով վստահ ենք Թէ ա՛լ անելի մեծարելի եւ համակրելի պիտի դառնայ ազգին ողջամիտ մեծամասնութեան : »

ԲԻԻԶԱՆԴ ԲԷԶԵԱՆ

« Հայ ազգի տարեգրութիւնների մէջ հազուադիւտ դէպք է, որ մի ընկերութիւն այնքան կարճ միջոցում ունենայ այնպիսի բեղմնաւոր գործունէութիւն եւ այնքան մեծ համակրութիւն ու ժողովրդականութիւն ձեռք բերէ, ինչպէս Հ. Բ. Ը. Միութիւնը : »

« ՄՇԱԿ », ՏՓՂԻՍ

« Մեր դժբախտ ազգին երախտագիտութեան ամենէն արժանի գործը անվիճելիօրէն այս Բարեգործական Միութիւնն է, որ ազգին համար աւագ կարեւորութիւն մը ունի, եւ որուն բարոյական վերականգնումին կ'աշխատի բարեբախտաբար : Ոչ մէկ ընկերակցութիւն յղացուած եւ կազմուած է մեր մէջ, որուն օգտակարութիւնը այնքան մեծ եւ գործնական ըլլայ, կամ որ առաջնորդուած ըլլայ այնքան նշանաւոր եւ տիեզերական հաջակի արծառացած անձնաւորութենէ մը : »

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

« Աջակցելով Հ. Բ. Ը. Միութեան, ծառայում եմք Մայր-Հայրենիքին : »

ԳԵՈՐԳ ԱԲԳԱՐ

« Այն համոզման հասած էի որ, Որբանոցներու գործին մէջ, մենք հայերս անկարող ենք ու եւ լաւ բան ընել եւ կատարեալ կազմակերպութիւն մը յառաջ բերել : Մերսինի Հայկ. Բարեգործականի Որբանոցը իմ այդ դժբաղդ համոզումս խախտեց : Պէտք է ուրեմն յուսալ որ, երբ պարտաճանաչ եւ սիրտ ունեցող հայեր, ինչպէս են անշուշտ այս Որբանոցին ղեկավարները, գործի գլուխ անցնին, մենք ալ կրնանք եւրոպական կատարելութեամբ որբանոցներ ունենալ : »

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

« Մեծ հաճոյքով դիտեցի տեղւոյս (Մերսին) Հայկ. Բարեգ. Ընկերութեան մէկեւ համեզտ բայց շատ մաքուր ու մեծ խնամքով պահուող հիւանդանոցը, եւ հեռանում եմ հիանալի տպաւորութեամբ : »

Ա. ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

«...ի՞նչ է արդէն օժանդակել Միութեան, օգնել անոր, լարձրացնել անոր վարկը, եթէ ոչ հայրենիքին օգնել, օգնել հայուն եւ վերաշինել իր կործանած տունը : Մարդ կամաւոր կոյր ըլլալու է շտեմներու եւ կամ ջլտելու համար Բարեգործականի Թափած Ֆիգն ու ջանքը, օգնելու հայ իսլեակներուն, փրկելու, ժողվելու իր Թեւերուն տակ գեղաւատ անոր ձագուկները, պատուապարելու որբերն ու այրիները, գործ հայթայթելու անգործին. վերջապէս Միութիւնը իր գործերովն իսկ ըլլալով հայութեան կենսաւրաշխ ջիղը, իսկապէս արժանի է կոչուելու Ազգային Բարերար Միութիւն : »

ՅԱԿՈԲ ԶՐԶԵԱՇԱՐԵԱՆ

1273
« Իմ բոլոր տեսած որբանոցներու մէջ դիտած եմ որ Հ. Բ. Ը. Միութեան որբանոցները զգալիօրէն լաւ կազմակերպուած են, եւ ասոնց շարքին Տէօրթ-եօլի Քէլէկեան որբանոցը տիպար որբանոց մը գտայ : »

ՌՈՒԲԵՆ ՇԵՐԵԱՆ

« Եկայ, տեսայ եւ կ'երթամ : Սակայն երթալէ առաջ, անգամ մ'ալ խուզարկու նայուածքս կ'ուղղեմ Հ. Բ. Ը. Միութեան Տէօրթ-եօլի Քէլէկեան Որբանոցի երկու հարիւրի մօտ սաներուն վրայ : Սրտի անհուն հրճուանքով կը դիտեմ միամեայ յրջանի մը մէջ Որբանոցին ցոյց տուած հսկայաքայլ յառաջդիմութիւնը : »

ԱՊԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

« Իմ տեսած Որբանոցների մէջ կովկասում, Կիլիկիայում եւ Սուրիայում, Չոք-Մարզուանի Հ. Բ. Ը. Միութեան Որբանոցը միակն է, որ գործում է օրինակելի եւ սքանչելի մեխանիզմով : ...Այսպիսի որբանոցներից է որ հայ արշալոյսը պիտի ծագի : »

ԲԺ. ԵՐՈՒԱՆԴ ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

« Հօր եւ առողջ ազգերը աւելի կը գեղեցկանան, կ'ազնուանան ու կը զօրանան՝ տառապանքի բովէն անցնելով: Այս օշմարտութեան եծէ ո եւ է ուրիշ ապացոյց չըլլար, Քէլէկեան Որբանոցի հրաշալի հայ տղեկները՝ իրենց արտակարգ կենսաւակութեամբ, ուշիմութեամբ, աւինով, պիտի բաւէին զայդ հաստատելու: ... Հաստաքը՝ զոր միշտ ունեցած եմ հայ ցեղին մեծ ապագային վրայ՝ աճեցաւ ու զօրացաւ իմ մէջս: »

Ա. ԶՊԱՆԵԱՆ

« Աւելի նուիրական, աւելի ազնուական հաստատութիւն չեմ կարծեր որ գոյութիւն ունենայ քան Մերսինի Բարեգործականի այս Որբանոցը, ուր երեք անգամ Թանկագին լաղըն ունեցայ որբերուն հիւրն ըլլալու: »

Ա. ԶՊԱՆԵԱՆ

« Պարտականութիւն կը զգամ շնորհաւորել Հիւանդանոցին վարիչները, եւ գրել Ամերիկա որ շարունակեն զօրացնել Հայկ. Բարեգործականը, հպարտ զգալով իր տուած արդիւնքներուն համար: »

ՏՕԲԹ. Ա. ԳՈՒՅՈՒՄՅԵԱՆ

« Ոչ Թէ անցորդի մը պէս այցելած, այլ երեք օր պառկած եմ այս Հիւանդանոցը: Բարեգործականը ոչ մէկ տեղ այսքան բաղդաւոր եղած է: Այս հաստատութեան բոլոր պաշտօնեաները, բժիշկէն սկսեալ մինչեւ յետին սպասուհին, նախախնամութիւն մ'են խեղճ պատսպարեալներուն համար: »

ԽԱԶ. ԳՈՒԴԶԵԱՆ

« Իբր մեծագոյն գնահատում պիտի կրնամ ըսել, եւ այս ամենամեծ հաճոյքով, որ Մերսին այցելող ո եւ է

մէկուն համար առաջին դիտելու արժանի եւ ապահովա-
րար ամէնէն աւելի շահագրգիռ եւ գնահատելիք հաս-
տատութիւնը Շ. Բ. Բ. Միութեան Որբանոցն է, Որբանոց
մը, որուն պիտի փափաքէի «Ո»ն «Ս»ի փոխել, զայն կո-
չելու համար Սորանոց, այնքան բարի եւ սուրբ է գործը,
եւ այնքան մաքուր եւ ազնիւ զգացումներով եւ գաղա-
փարականով կը վարուի եւ կը խնամուի այն : »

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

« Եթէ վնենտիկի Ս. Ղազար վանքը հայ ազգին
համար պարծանքի արժանի հաստատութիւն մըն է, Քէլէկ-
եան Որբանոցն ալ կիլիկիոյ Հայութեան պարծանք եւ
փառք է : »

ՎԱՀԱՆ ԽՈՒՊԵՍԵՐԵԱՆ

« Ամէն անոնք որ կը տարակուսին կամ թերահա-
ւատ են Բարեգործականի մատուցած ազգային գերազան-
ցապէս օգտակար ծառայութեան, անպայման չեն այցե-
լած Միութեան Մերսինի Որբանոցը : »

ԳՈՒՐԳԵՆ ԹԱՀՄԱՋԵԱՆ

« Ի՞նչ ունինք օտարներու ցուցադրելու. որբանոց-
ներ, այրիներու եւ թշուառներու խումբեր. բայց գոնէ գոհ
ըլլանք որ այս լաւ կ'ընենք : Բարեգործականի Որբանոց-
ները նիւթապէս եւ բարոյապէս մաքուր են : »

ՏՕԶԹ. ՆԱԳԳԱՇԵԱՆ

« Ազգային կեանքի մէջ եթէ կայ ընդհանուրին հա-
մակրութիւնը ու վստահութիւնը վայելող կազմակերպու-
թիւն մը, որ կոչուի ունենայ ո՛չ միայն աղետահար հա-
յութեան վշտերն ամոքելու, այլ իբր ազդակ ծառայելու
հայրենիքի վերաշինութեան նուիրական գործին՝ Շ. Բ. Բ.
Միութիւնն է, որուն հանդէպ իւրաքանչիւր հայ երախտա-
գիտութեան անխուսափելի պարտք մը ունի կատարելիք : »

ԹՈՐՈՍ Մ. ԱԶԱՐԵԱՆ

« Հայր իր Բարեգործականով ինքն իրեն կը ծառայէ : »

(ՎԵՐ.) Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

« Առաջին անգամ է որ հայ որբանոց մը կ'այցելեմ ու տպաւորութիւնս խոր է : Ցեղին ծնողազուրկ զաւակները մեծցնելու, կրթելու ու ազատ եւ հայրենասէր քաղաքացիներ պատրաստելու համար Թափուած ջանքերը ամէն գովեստէ վեր են : Ապրին ամէն անոնք որոնք կ'ապրեցնեն մեր որբերը, որոնք ցեղին յոյսն ու ապագան են : »

ՏԵԼԷՄԱՔ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ

« Այս Միութիւնը, իր գոյութեան կարճատեւ շրջանին մէջ իսկ՝ արդէն նշանակելի արդիւնքներ ձեռք բերած է, փոխանակ ժամավաճառ ըլլալու այն անհատնում վէճերով որ ցարդ յատկանիշը եղած են նմանօրինակ հայ կազմակերպութիւններու : Հ. Բ. Ը. Միութեան պատմութիւնը Թերակատար Թողած պիտի ըլլամ, եթէ տեսութիւնս սահմանափակեմ անոր *ուղղակի* ծառայութիւններուն մէջ միայն : Մեր ազգային նկարագրին վրայ անոր գործած *անուղղակի* ներգործութիւնն աւելի՛ գերազանց, աւելի՛ շինիջ, եւ աւելի բազմակողմանի կը նկատեմ, քան անոր ուղղակի արդիւնքները : Ասով կ'ուզեմ իրարմէ զանազանել անոր *բարոյական* բարիքները՝ նիւթական ծառայութիւններէն : Հ. Բ. Ը. Միութիւնը զգալապէս արեւմտեայ ազգային համերաշխութեան ոգին, եւ ապահովարար մեր ցեղին մէջ պիտի զօրացնէ կարգապահութեան եւ պարտաճանաչութեան ոգին, ազգային գոյութեան այդ ամենակենսական պայմանը : »

ՎԱՀԱՆ ԳԱՐՏԱՇԵԱՆ

ՕՏԱՐՆԵՐՆ ԻՍԿ

ԲԱՐՁՐՕՐԷՆ ԿԸ ԳՆԱՀԱՏԵՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՆԸ

« Որբեր պահելու եւ պատսպարելու ձեր գաղափարը հիանալի է: Հայկական դատին ամբողջ ապագան այս որբերէն կախեալ է: »

ԳՆԴԱՊԵՏ ՊՐԷՄՕՆ

Ընդհ. վարիչ Կիլիկիոյ

« ...Առիթ ունեցած եմ, եգիպտոսի մէջ, հիանալու թէ կազմակերպական ի՞նչ ոգիով կը կառավարուի ձեր Բնկերութիւնը, յետոյ Կիլիկիոյ մէջ ալ հաստատած եմ թէ ի՞նչքան ձեր գործն ու գործնէութիւնը օգտակար են երկրին: »

ԳՆԴԱՊԵՏ ՊՐԷՄՕՆ

« Իբրեւ Ամերիկացի կամ Գանատացի, չեմ կրնար հաւատալ, որ ո եւ է ազգասէր հայ Հ. Բ. Ը. Միութեան անդամ եղած չըլլայ. եւ եթէ ես եպիսկոպոս մը ըլլայի, այս բեմէն կոչ պիտի ընէի ձեզ, որ եթէ ձեր մէջ կան անդամ չեղողներ, անդամ գրուին անմիջապէս, վասն զի Բարեգործականին տեղը շատ մեծ է որբախնամ գործին մէջ: »

ՏՕՔԹ. ՄԷՔԱԼԼԸՄ

« Պարզապէս հիանալի է այն գործունէութիւնը զոր Բարեգործական Միութիւնը կ'իրագործէ Բօր-Սայիտի եւ Կիլիկիոյ զանազան վայրերուն մէջ, եւ որուն շնորհիւ

հաշարաւորներ ստոյգ մահէ կ'ազատուին, կը խնամուին, կը կրթուին եւ այնպիսի վիճակի մը մէջ կը դրուին, որ կարող պիտի ըլլան մօտալուտ ազատ Հայաստանի հիմնաքարերը ըլլալու :

« Ուր որ Հ. Բ. Բ. Միութիւնը հաստատուած էր, մեզի գործ չէր մնացած կատարելու : »

ՏՕՔԹ. ՈՒՇՐԹ

« Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը կատարելապէս վստահելի հաստատութիւն մըն է : Մտածեր են քանի մը ընդարձակ Որբանոցներ հաստատել : Հարկաւ կ'ըմբռնէք այս հայերուն ազգայնական սուր ոգին, զոր ոչ մի Ամերիկացի իրաւունք ունի մեղադրելու : »

ՄԷՃՐ ՃԷՅՄՍ Հ. ՆԻՔՕԼ

« Հ. Բ. Բ. Միութիւնը ներկայիս կը տարածուի Եգիպտոս, Սուրիա, Պաղեստին եւ Կիլիկիա : Ուրախառիթ է նկատել որ անոնք ընդհանրապէս կը գործեն այնպիսի վայրեր ուր մենք ներկայացուցիչ չունինք : »

ՈՒ. ԲԻԹ

« Կը խնդրեմ իմ ամենաջերմ շնորհակալութիւններս յայտնել Հ. Բ. Բ. Միութեան, այն պատրաստակամ տրամադրութեանը համար՝ որով իր ուսերուն վրայ յօժարած է առնել առժամապէս Մերսին փոխադրուած Որբանոցին ծանր հոգը : Արդարեւ ամենամեծ փափաքս է տեսնել այսքան կարեւոր հաստատութիւն մը յանձնուած պարկեշտ եւ ճարտար ձեռքերու, Հ. Բ. Բ. Միութեան պէս լուրջ որքան եւ լաւ կազմակերպուած ընկերակցութեան մը : »

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Մ. ՉԱՍԼԵՐ

« Պարտք կը սեպեմ ձեզի ըսել որ այն ամէն մանրամասնութիւնները զոր կը հաղորդէք կը հաստատեն այն գերբնտիր տպաւորութիւնը զոր միշտ կրած եմ կիլիկիոյ մէջ ձեր լ'նկերութեան կատարած գործին մասին. եթէ ատոր պէտք կար, անոնք լիուլի կ'արդարացնեն նաեւ իմ կատարեալ վստահութիւնս ձեզի հանդէպ եւ իմ յարատեւ փափաքս ձեզի ընծայելու իմ բոլոր աջակցութիւնս, հնարաւորութեան սահմանին մէջ : »

ԶՕՐ. ՏԻԻՖԻԵՕ

Հրամանատար Կիլիկիոյ

« Այս պատեհութեամբ կու գամ յայտնելու մեր անկեղծ գնահատութիւնը այն արժէքաւոր գործակցութեան համար զոր մենք շարունակ վայելած ենք Շ. Բ. Լ. Միութեան կողմանէ, եւ ի գիտութիւն ձեզ կը հաղորդենք թէ ատիկա մեծ խնամք մը եղած է մեր յարատեւ եւ մեծ ջանքերուն, լուծելու Մերձաւոր Արեւելքի կարօտ ժողովուրդին խիստ կարեւոր խնդիրը : ...Վստահ ենք թէ այդ գործակցութիւնը պիտի շարունակուի աւելի սերտ կերպով, որովհետեւ այն նպատակը որուն համար կազմակերպուած էք եւ զոր այնքան հաստատակամութեամբ կը ջանաք գլուխ հանել, նպատակներուն մէկ մասն է նիր իսթ Րըլիֆի, որ իր նուիրումով Ամերիկեան առատաձեռն ժողովուրդին երկարող ձեռքը կը ներկայացնէ եւ անոր զգացումներուն թարգմանը կը հանդիսանայ : Ուստի յանուն մեր միլիոնաւոր անդամներուն, կը յայտնենք մեր շնորհակալութիւնը Շ. Բ. Լ. Միութեան ծառայութիւններուն համար : »

ՎԻՔՐԻ

Ընդհ. Զարտ. Նիր Իսթ Րըլիֆի

« Շատ մեծ հաճոյք զգացի տեսնելով ձեր կատարած գործը եւ տեղեկագրեցի մեր ժողովին այն գեղեցիկ եւ յաջողակի ջանքերը զոր ձեր մարդիկ կը կատարեն (երեսաղէմի մէջ) : »

Հ. ՄԷՔԶԷՅՅԻ

« Տպաւորութիւնս խիստ նպաստաւոր եղաւ եւ մեծ հաճոյքով հաստատեցի թէ խնամքով ծրագրուած գործի մը հանդէպ կը գտնուիմ : Անիկա կոչուած է վերին աստիճանի օգտակար հանդիսանալ իրմէ օգնութիւն սպասողներուն համար : Անոր յաջողութիւնը ապահով կը նկատեմ : »

ՕԼԻՆ Բ. ԼԻ

« Շատ բերկրակի ժամանակ մը անցուցի այցելելով Որբանոցը : Անկեղծ հաճոյք մըն է այսպիսի հաստատութիւն մը տեսնել այսքան մաքրութեամբ եւ կանոնաւորութեամբ : Տղաք կը թուին վայելել կատարեալ ազատութիւն եւ հոգեկան տրամադրութիւն : »

Գ. ԷՕՍԹԷՅՁ ՀԸՏՍԸՆ

(Լօրտ Մէլլըս Ֆրնտ)

« Մեծ հաճոյքով այցելեցի «Վասպուրական» Որբանոցը եւ կը շնորհաւորեմ անոր վարիչները այն օգտակար աշխատանքին համար զոր կը կատարեն որբերուն բարօրութիւնը ապահովելու նպատակաւ : »

ՀԵՐՊԵՐԹ ՍԱՄՈՒԷԼ

Բարձր Գովիսէր Պաղեստին



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0332064

Mr
127